

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԾՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ստեփանակերտի ներկայիս շրջանի տա-
րածության մի մասը՝ մոտավորապես Կար-
կառ գետի աջաօնյա հատվածը, նախկի-
նում մտնում էր Վարանդա, իսկ ձախափ-
նյան՝ Խաչեն գավառների մեջ։ Անցյալի
պատմության շատ հիշատակություններ
կան Կարկառի բարեքեր հովտում։

Դրանք հնագույն դամբարանաբլուրներն
են, անտիկ ու ամստյեղի բերդեր, վան-
քեր, դղյակներ, եկեղեցիներ, մատուռներ,
նախկին գյուղերի ավերակներ, խաչքարեր,
որոնք գտնվում են մասամբ լեռնային բար-
ձուրների վրա, գետահովիտներում, ան-
տառների մեջ։

ԱՎԵՏԱՐԱՆՈՑ ԿԱՄ ՉԱՆԱՂԶԻ ԳՅՈՒՂԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Սքանչելի է Չանաղչին՝ Վարանդայի
գարդը։ Բնությունը ոչինչ չի խնայել նրա
գեղեցկության համար։ Հենց այստեղից՝
գյուղի հյուսիս-արևմտյան ծայրից է սկիզբ
առնում Քիրսը՝ Ղարաբաղի երկրորդ նշա-
նավոր լեռնաշղթան։ Դրանից է, որ Չա-
նաղչին հարուստ է սառնորակ աղբյուր-
ներով։

Առասպելներով պսակված, այգիներով
ու անտառներով շղարշված գյուղ է Չա-
նաղչին՝ հին Ավետարանոցը, որը, հնօրյա
ավանդությունների համաձայն, գոյություն
է ունեցել դեռևս մեկ ու կես հազարամյակ
առաջ։ Այդ են հուշում այստեղի այն մեծ
ու փոքր հուշարձանները, որոնց քանակը
շատ ու շատ է։

Ավետարանոցը Վարանդայի մեկիքության
բերդավանն էր, նստավայրը, մեկիքանիս-
տը։ Միջնադարում, հատկապես մեկիքու-
թյան տիրապետության ժամանակաշրջա-
նում, այն ամրացված է եղել ամուր պա-
րիսպներով։ Դեռ մնում են այդ պարիսպ-
ների, ինչպես նաև մեկիքների թաղակապ
ապարանքների արդեն կիսով չափ փլված
պատերի և այլ ավերակների մնացորդները։

Սարգիս Զալալյանցը հին մեկիքանիստ
Ավետարանոց ավանում լսել է մի ավան-
դություն, ըստ որի Աղվանից Վաչե Բ թա-
գավորը 5-րդ դարում ձգնել է հենց այս-
տեղ. «ԶԱՎԵՏԱՐԱՆԱՆ ԲԻՍԱՏՈՒՍ ԸՆԿԱԿԵԱԻ
Ի ԳԻՐԿԱ ԻՐ՝ ԵԼԵՆ ԱՍՏԱՆՈՐ ԱՌԱՆՃԱՏԵԱԼ
Ի ԽԱՏԱԿՐՈՏ ՎԱՐԱ ՁԳՆՈՒԹԵԱՆ. ՈՍՏԻ Լ
ԱՆՈՆ ՍԵՂՈՅԱ ԿՈՇԵՃԱՍ ԱՎԵՏԱՐԱՆՈՑ, ԳՈՒ-
ԳԷ Լ ԱՍՏ ԸՆԿԱԿԱԻ ԲԱՐԵԿԱՅՈՒՄ ԱՐՔԱՅԻՆ
ԳԹՈՒՂԹ ՕՐԲՆՈՒԹԵԱՆ Ի ԳԻՍՏ ԵՐԱՆԵԼԻ ԿԱ-
ԹՈՂԻԿՈՒՄ ՀԱՅՈՑ»¹։

Խոսքը վերաբերվում է Գյուտ կաթողի-
կոսի երկու հայտնի նախնիների՝ ուղղված
Վաչե Բ-ին, որոնք պահպանվել են Մ. Կա-
ղանկատվացու պատմության մեջ, սակայն
անկախ այդ պատմությունից, կան նաև
հնագույն ձեռագրերում²։

Մեջբերումից երևում է, որ գյուղի Ավե-
տարանոց անունը հենց Վաչե երկրորդի

¹ Ս. Զալալյանց, Ծանապարհորդություն ի Մեծն
Հայաստան, մասն Բ, էջ 248։

² Տե՛ս Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի
գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966 թ.,
էջ 116։

քարոզչության հետ է կապված: Հենց այս նույն վաչեի անվան հետ էլ կապված է մայրաքաղաք Պարտավի (Բարդայի) հիմնադրումը: Իսկ նրա եղբորորդի Վաչագան թագավորն էլ կառուցել է երկրամասի ամենամեծ ամրավոր վանքերը, եկեղեցիները և մատուռները, տարվա օրերի թվով, այսինքն՝ երեք հարյուր հիսունից ավելի:

Ըստ ավանդության՝ Ավետարանոցում է թաղված նաև Համամ Բարեպաշտ թագավորը:

Ծուրջ չորս դար էր քաժանում Աղվանից երկու մեծ Առանձաբիկ թագավորներին՝ Վաչեին ու Համամ Արևելցուն: Սակայն նրանց կյանքն ու գործը շատ քանով նման են իրար: Նրանք երկուսն էլ իրենց մշակութային քարեկոթողական եռանդուն գործունեության և ազգային եկեղեցու գործին մատուցած ծառայությունների համար արժանացան հայրենակիցների սիրուն և ավանդախառն պատմությունների մեջ հերոսացան³:

Համամն իր ճակատագրով կարծես կրկնում էր Վաչե թագավորին: Ինչպես նշվեց, երկուսն էլ հրաժարվեցին գահից և նվիրվեցին հոգևոր գործունեության և իրենց մահկանացուն կնքեցին Ավետարանոց գյուղում: Մ. Բարխուդարյանը պատմում է, որ Համամ թագավորը թաղված է այս գյուղում, և որ Համամ թագավորի գերեզմանաքան ունի հարթաքանդակ՝ հեծյալ թագավորի պատկեր՝ խաչը ձեռքին, ձիու հետևից մի ահագին վիշապ՝ երակը բաց: «Խաչագարդ է տապանաքարիս միս երեսը և քանդակված մեջքի վրայ, որ կարդացում է խիստ դժուարությամբ. «Ի ՈՂ. Աճճեց Հա... թգարդի Աղվց... Ես տէր Մատուն գրեցիք. այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ»⁴:

Հավանաբար Համամի իսկական տապանաքարը մաշված է եղել, և ոմն Մատուն ՈՂ (1241) թվականին նորն է քաշել, անհայտությունից փրկելով Բարեպաշտ Համամ թագավորի գերեզմանը: Հին Արցախի տարբեր վայրերում մնացել է Համամի հիշատակը: Հիմա էլ դեռ Համամի խոթ է կոչվում Վարանդայի Մեջքապատ գյուղի դաշտում գտնվող մի բլուր: Համամի ձոր է կոչվում Ներքին խաչենի Գառնաքար գյուղից վերև գտնվող ձորն իր իշխանական դղյակների ավերակներով: Համամի թողած արձանագրությունն իր որդու գերեզմանաք-

րի վրա գտնվել է Աղդամի շրջանի Սոփունու գյուղի կողքի Գյավուր Ղալա (անհավատի կամ հայկական քերդ) ավերակներից: Այժմ այդ տապանաքարը պահվում է Աղրքեջանի պատմության թանգարանում:

Ավետարանոց-Չանաղչի գյուղի այժմյան կանգուն եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին՝ կառուցված չորս սյուների վրա փոքրիկ կաթողիկեով: Դուսն ճակատակալ քարի վրա գրված է «ԹՎ ՌԾ»⁵ (1651 թ.):

Մեղիք Բաղու կողմից շինած այս եկեղեցին եռանավ բազիլիկ է, որի արտաքին չափերն են 27,35×15,30: Ունի մի մեծ և երկու փոքր խորան, և երկու խորհրդարան, որոնց վերնամասում կան մեկական գաղտնի սենյակներ, որոնցում պահվում էին եկեղեցու թանկագին իրերը:

Այստեղ գտնվող բոլոր հուշարձանների մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Կուսանոց անապատը: Այն գտնվում է գյուղի հարավ-արևմտյան կողմում, մի զանիվայր հրվանդանի վրա: Այս հուշարձանի արևմտյան կողմից ձգվում է քավական հաստապատ պարիսպ: Հին գյուղը շրջապատող պարիսպներից մնացել են առանձին հատվածներ և մի քանի կիսականգուն աշտարակներ: Կուսանոց անապատի բարձունքից Քիրսը երևում է հեռու մշուշի մեջ՝ կանաչ գգեստ հագած: Մյուս կողմում վեր են ելնում Դոնդիկ և Մավա կոնսաձև լեռները: Անապատի պարիսպների տակով անհանգիստ հոսում է լեռնային Ավետարանոց գետակը՝ եզերված պտղատու այգիներով ու անտառներով:

Անապատի եկեղեցում, դուսն ճակատի կամարի վրա, եղած արձանագրությունը՝ «Եկեղեցիս ԹՎ. ՌԿԵ (շինեցա)»⁶, վկայում է, որ այն կառուցվել է 1616 թվականին: Իսկ Սարգիս եպիսկոպոս Ջալալյանցն իր «Ծանապարհորդության» մեջ գրել է, թե ինքն այստեղ տեսել է մի գեղեցկագիր հիշատակարան, ըստ որի՝ եկեղեցին շինել են Գայանե և Հոհիսիմեն քույրերը, Տեր Առաքելի աջակցությամբ: Բայց ավանդությունը եկեղեցու հիմնադրումը Աղվանից թագավոր Վաչե 2-րդին է վերագրում: Ըստ երկույթին Գայանեն ու Հոհիսիմեն միայն վերակառուցել են շենքը:

Կուսանոց անապատի եկեղեցին շինված է տեղական տաշած քարից: Հատակագիծը խաչաձև է, ունի 11 մ երկարություն, 9 մ լայնություն և 7 մ բարձրություն: Դահլիճի մեջ կանգնած են երկու բոլորովին հասարակ սյուներ, որոնց վրա բոլորվում են ա-

³ Մ. Բարխուդարյանց, Պատմություն Աղվանից, Ա, Էջմիածին, 1902, էջ 193:

⁴ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 98 (այսուհետև՝ Արցախ):

⁵ «Բնաշխարհիկ քառարան», էջ 346:

⁶ «Արցախ», էջ 96:

դեղնածն կամարները՝ իրենց վրա պահելով թաղակապ կտորը: Արևմտյան կողմում բացվում են մի փոքրիկ դուռ և երկու պատուհան: Երկու փոքր պատուհաններ էլ գտնվում են հարավային կողմում, իսկ մեկը՝ արևելյան մասում:

Կուսանոց անապատի եկեղեցու գավիթն ուղղանկյուն թաղածածկ շենք է, ունի 6 մ երկարություն, 9 մ լայնություն: Այն ծառայել է իբրև Մելիք-Ծահնագարյանների տոհմական դամբարան: Այստեղ են գտնվում Մանվել Վարդապետի, Մելիք Միրզայի, Մելիք Հուսեյնի, Մելիք Հովսեփի և նրանց կանանց գերեզմանները:

Օտարերկրյա գավթիչների դեմ մղված բազմադարյան պայքարում իրենց խիզախությամբ ու հայրենասիրությամբ աչքի ընկան Վարանդայի Մելիք Հուսեյնը և նրա աղջիկ Գայանեն:

Գայանեի և նրա մոր՝ Աննա խաթունի քաջագործությունների հիշատակը պահպանվում է միայն ժողովրդական ավանդությունների մեջ, իսկ Մելիք Հուսեյնի մասին խոսում է նրա տապանաքարի արձանագրությունը, որը գտնվում է գյուղի հին հանգստարանի մոտ.

«Այս է տապան Մելիք Ծահնագարին
(Գ-ին)

Որ է որդի Մելիք Յիսեյնի,
Արցախ գաւառանց իշխանին
Վարանդու տիրապետողին,
Սա էր հայր Մելիք Զիւմշիտին,
Ըստ Ռուսաց պոկովնիկին,
Ազնի ոմն Հայոց ազգին,
Արի և քաջ զօրավարին
Խնդրեն առնել զայս արձանին
Միտ բերան Հայր մեղային
ՌՄՍ. թվին, (1792)՝:

Ինչպես Ռուզանն է իրեն զոհաբերել իր հայրենի երկրամասը թաթար-մոնղոլական հրոսակախմբերից փրկելու համար, այնպես էլ Գայանեն է պայքարել թուրքական գավթիչների դեմ: Ռուզանի կերպարը տաղանդավոր վիպասան (Թուշեցի) Մուրացանին ոգեշնչել է գրելու «Ռուզան» պատմական դրաման: Իսկ հերոսուհի Գայանեի մասին դարձյալ շուշեցի պատմաբան և գրող Լեոն է գրել «Մելիքի աղջիկը» վեպը:

Գյուղի հարավային կողմում է գտնվում Մելիք հաղու ապարանքը, որը բաղկացած է եղել մի քանի «Ղարադամներից» ամբողջովին քարից շինած: Այս բնակարանները մասամբ կանգուն են և կարևոր նյութ կարող են տալ Ղարաբաղում (17—18-րդ դա-

րերի) կառուցված բնակարանների, հատկապես ղարադամների ճարտարապետության հետազոտողներին:

19-րդ դարի առաջին քառորդում գործվար Վ. Մադաթովը (ի դեպ նա ծննդով ղարաբաղցի է՝ Մադաթեհնից) նշված ղարադամներից մեկի վրա դրյակ է կառուցել: Սակայն այս կառույցի հետքերն անգամ չեն մնացել:

Գյուղի արևմտյան կողմում ժայռին անմիջապես կաած է եղել Մելիք Հուսեյն առաջինի ապարանքը: Այժմ այն չկա, կործանվել է անցյալ դարի վերջերին: Իսկ հյուսիսային կողմում, պարսպին կից, գտնվում էր Մելիք Ծահնագար երկրորդի ապարանքը կամ ամառանոցը, բաղկացած մի քանի ղարադամներից և թաղակապ սենյակներից: Գլխավոր դռան վրա եղել է հետևյալ արձանագրությունը. «Այս ամառաբաթ Մելիք Ծահնագարի (Գ) որդի Սեյիմբեկին, որ է այս շինությունս, որ շինել տուած շենքն է. ՌՄԼԵ»⁸:

Ղարադամի կամ Մեծ տան ճարտարապետական տիպիկ համակառուցումներ են նաև մելիքների ամառաբանքը, որոնք կառուցել են ժողովրդական վարպետները և տարբերվում են աշխատավոր ժողովրդի տներից՝ իրենց դիրքով, մեծությամբ, բաժանմունքների քանակով, հարդարանքով և այլն:

Մելիքական ղարադամներ կառուցելու ժամանակ կիրառվել են ամբողջությամբ կամ մասամբ քարաշեն ծածկեր, որոնք, բնականորեն փայտաշեն ծածկերի ձևեր, նույն դերն են կատարել:

Մելիքական կենցաղի և բնակարանի մասին հավաստի տեղեկություններ է տալիս Լեոն. նա գրում է. «Իբր խոշոր կալվածատերեր և արևելյան վասալներ, մելիքները մեծ հարստություններ էին դիզում և ապրում էին ճոխության մեջ, հետևելով, իհարկե պարսկական ճաշակին և բարձրաստիճան ավագանու միտ ու կացին, բայց մնալով միսմամանակ կատարյալ ժողովրդական մարդիկ, ժողովրդի մեջ ապրող և ժողովրդի հետ շփվող՝ առօրյա կյանքի բոլոր մանրամասնությունների մեջ: Նրանք ունեին շատ խոշոր տնտեսություն և ծառաների հոծ բազմություն»⁹:

Գյուղի հարավ-արևելյան մասում մեծ տաքածություն է զբաղեցնում հին գերեզմանատունը, ուր կան ուշադրության արժանի բազմաթիվ տապանաքարեր՝ դրվագապատկերներով ծածկված:

⁸ Ե. Լալայան, Վարանդա, Թիֆլիս, 1898, էջ 82:

⁹ Լեոն, Հայոց պատմություն, հատ. 3-րդ, Երևան, 1946, էջ 508, 510:

Ուսումնասիրող Եր. Լալայանը 19-րդ դ. վերջին Հանադչու մասին գրել է. «Այժմ Չանադչին ավելի մի գյուղաքաղաքի է նման: Բազմաթիվ, գեղեցիկ և եվրոպական մշակով կահավորված տները, բավական վայելուչ խանութները բոլորովին կերպարանափոխում են գյուղի տեսքը: Գյուղում կան մեծ տաքսի երեք գործարաններ, որոնք ահագին ազդեցություն են ունեցել և ունեն գյուղի տնտեսական և բարոյական վիճակի վրա: Սա և շուշեցիների սիրելի ամարանոցն է»¹⁰:

րանոցում: Ընդ որում, ինչպես մատնանշում են վավերագրերը, սղնախում պատրաստվիճակում սպասում էին մահ այն գործարանները, որոնք նույն դարի 20-ական թվականներին տեղափոխվել և հիմնավորվել են Շուշիի նորաստեղծ սղնախում: Որ դրանից առաջ էլ այստեղ պահվում էր պալքարող զորք, տեղական ինքնավարության հաստատությունները պաշտպանող ուժեր, հաստատվում է (ժամանակին ստեղծված) պաշտպանական այն համակարգով, որի հետքերն են միայն մնացել:



Խնածախ գյուղի ու Աստվածածին եկեղեցին

ՍՂՆԱԽ

Ավետարանոց-իշխանանիստի պաշտպանական հիմնական կետը հանդիսացել է Սղնախ ուսմանական ամբիոնությունը: Լենինգրադի, Թբիլիսիի. արխիվներում հայտնաբերված արժեքավոր փաստաթղթերից երևում է, որ 18-րդ դարի սկզբին Ղարաբաղի միացյալ ուժերի հրամանատար Ավան-Յուզբաշին իր զորքերի մի զգալի մասը պահում էր այստեղ՝ Սղնախ կոչված գո-

ջորակի եզրով, բլուրների լանջերով ձգվող պարիսպների, միջնաբերդի և դարադամներին նմանվող բազմաթիվ շինությունների տեղադրությունից երևում է, որ Սղնախը՝ ամուր «ցանկապատով» մեկուսացված է եղել արտաքին աշխարհից:

Ավերված, քանդված շինությունների (պատրաստի մշակված) քարե շտեմարանը հետագայում օգտագործվել է գյուղացիների կողմից:

1968 թ. մենք Սղնախում տեսել ենք մի քանի դարադամներ: Միշտ է, փլված էր նրանց թաղական ծածկը, բայց լրիվ պահ-

¹⁰ Ե. Լալայան, նշվ. աշխատ., էջ 38:

պանված էր կրաշաղախով շարված ամուր պատերը: Դարադամները քառակուսի հատակագծով մեծ դահլիճներ են, որոնք ունեն Դարաքաղի բնակելի շենքերի համար պարտադիր բուխարիներ (օջախ) և պատերի մեջ պտրհաններ (խորշեր):

Ղևոնդանց անապատ կամ Ղևոնդիկ հուշարձանը բաղկացած է մի փոքրիկ եկեղեցուց, գավթից, ավերակ սեմյակներից, գերեզմանոցից և քարուքանդ պարիսպներից: Այն գտնվում է Ավետարանոց, Վերին Թաղավարդ և Մոշիմհատ գյուղերի արանքում քարձրացող լեռան կատարին: Երվանդ Լալայանը քաղվածաբար բերում է Սարգիս Զալայանի լսած ու գրի առած այն ավանդությունը, ըստ որի «Ս. Ղևոնդ երեցի ազգականները Վարանդայում պտտելով, նրա նշխարներից գտել են, բերել-ամփոփել այդտեղ և կառուցել եկեղեցի: Եկեղեցում կա Ս. Ղևոնդի պատկերը...»¹¹, որ այժմ լրիվ թափված է: Եկեղեցին շինված է տեղական անմշակ քարից: Երկարավուն բազիլիկ ձևի շինության արևմտյան կողմում, կից է գավիթը: Երկուսը միասին ունեն 13,4 մետր երկարություն, 5,1 մետր լայնություն: Անապատ կոչվող եկեղեցու դռան հյուսիսային կողմում կա փոքրիկ արձանագրություն. «ԹՎԻՆ ՌԾ» (1651 թ.): Իսկ գավթի դռան մոյն մասում անաղարտ մնացել է «ՌՄԻԷ-ԻՆ» (1775 թ.) յիշատակ է գալիթս Զաքարիա, Յովսեփ և Մելքոն վարդապետացն»¹², երեք տողանի արձանագրությունը:

Սարուշենի հուշարձաններից ուշադրության արժանի է գյուղի Ամենափրկիչ եկեղեցին: Այն կառուցված է սրբատաշ կաթնագույն քարով, թաղածածկ դահլիճի հորինվածքով: Դռան բարավորի մեծ քարի վրա գտնվող արձանագրությունը հաստատում է, որ 19-րդ դարի 2-րդ կեսին Գրիգոր Ալվազյանի օժանդակությամբ նախկին հնաշեն եկեղեցին նորոգվել ու դարձել է գավառի առաջնակարգ ու գեղեցիկ եկեղեցիներից մեկը:

«Եկեղեցումս է Սարուշենի հոշակույած ձեռագիր Աւետարանը,—գրել է Մ. Բարխուդարյանը,—որի մոտ ուխտի են գալիս ոչ միայն Արցախի շատ կողմերից, այլև հագուից, Թիֆլիզից, այլև մահմեդականք: Աւետարանս մագաղաթեայ և մեծադիր է, որ ունի Ռատակէս, Վրդանէս և Ստեփաննոս վարդապետների պատկերները...»¹³:

Ծառ հետաքրքիր է Ավետարանի փրկության հետ կապված հիշատակարանը.

«Յամի Տեան 1827 և ի թուականիս (Հալոց) ՌՄԷԶ. տորք Աւետարանս, որ գերի էր ընկել Պարսից տէրութիւնն, ես Դարաքաղու Ծուշի Դալի բնակիչ Միրզայ Օհանէսեան Զարկաբեանցովս տեսի գտորք Աւետարանս ի ձեռս անօրէն այլազգեաց ի քաղաք Թսարէզ, վասն որոյ դրամս ետու և գնեցի ի արդար վաստակոց իմոց և բերեալ ի ամուրս Ծուշի և լանձնեցիմք այն տեղն, որ կայր և այժմ 1833 ամի և լամսեան մայիսի 12-ին. բերաք տեղս վասն մեր ուխտադրութեանն նորոգելութեամբ Աւետարանս, ահա նորոգեցիմք և պայծառացուցիմք ի յիշատակ մեր համայն կենդանեաց և մնջեցելոց.. Միրզայ Օհանէան»¹⁴:

Հիշարժան կառուցվածք է նաև Սարուշեն գյուղի դպրոցի նախկին շենքը: Այն երկհարկանի շինություն է, որն անցյալ դարի վերջին դարձյալ կառուցել է Գ. Ալվազյանը: Այն բաղկացած է չորս սեմյակից, մի մեծ դահլիճից և մի գեղեցիկ սրահից:

ՀԱՐԱՎԻ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԸ

Հարավ գյուղն իր բարձր դիրքով (այն փոխված է լայնածիր ժայռի վրա) հնում անտիկ բերդ է եղել:

Վերջերս այստեղ գտնված միջին մեծության մի հետաքրքիր խաչքար՝ խաղբակյան իշխաններից մեկի սեփական արձանագրությամբ, հավանական է դարձնում, որ այս բնակավայրը խաչենի իշխանության կենտրոններից մեկն է հանդիսացել: Նշված արձանագրությունը հաստատում է նաև, որ գյուղը խաղբակյանների տիրույթն է եղել, իսկ խաղբակյանները, ինչպես հայտնի է, Հասան Զալայանների տոհմակիցներն էին¹⁵:

Հարավից դեպի հյուսիս, թավոտ անտառի խորքում, մի չքնաղ ձորակի մոտ է գտնվում Բովուրխան կոչվող վանքը: Վանքի միակ կանգուն հուշարձանը փոքրիկ, երկարավուն եկեղեցին է, անտաշ, կաթնագույն քարով շարված: Ծիշտ է, եկեղեցու շուրջը ժամանակին շենքեր են եղել՝ շրջափակված պարիսպներով, սակայն դրանք լրիվ ավերակ են և դժվար է ամբողջական պատկերացում կազմել Բովուրխան վանքի վերաբերյալ: Եկեղեցին ունի 9 մետր 65 սանտիմետր երկարություն, 5 մետր 50 սանտիմետր լայնություն:

Մեծ և փոքր մեկական խորան, երեք լուսամուտ, մեկ դուռ և երկու խորհրդարան:

¹¹ Ե. Լալայան, Աշխ. աշխ., էջ 45:

¹² Նույն տեղում:

¹³ «Արցախ», էջ 101:

¹⁴ «Արցախ», էջ 101—102:

¹⁵ Բ. Ուրութբաբյան, խաչենի իշխանությունները X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 122:

Բոլոր տվյալներից երևում է, որ այն կառուցվել է միջնադարում: Մ. Բարխուդարյանցն անցյալ դարի վերջին այստեղ տեսել է մի խաչքարի բեկոր, որի վրա եղել է «Խաչս տանն Արցախի» արձանագրությունը: Իսկ մի այլ փոքր խաչքարի վրա նա կարդացել է. «Խաչս Կ. ես Բ. Հ.»¹⁶:

Ե՛վ խաչքարը, և՛ խաչքարի բեկորը, որոնց վրա կար նշված արձանագրությունները, անհետ կորել են:

Այստեղ՝ վանքի մոտ, զով անտառի գրկում է գտնվում մի աղբյուր: Ամռան շոգին հարյուրավոր ստեփանակերտցիներ իրենց հանգիստը անց են կացնում վանքի շրջակայքում, սառնորակ աղբյուրի մոտ:

ՄԱՍԱՂԱՍՈՒԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ստեփանակերտի շրջանի Վարազքունի (Արանգամի) գյուղը տարածվում է Մատաղախուրթի հյուսիսային լանջին: Գյուղի ս. Աստվածածին եկեղեցին հորինվածքով միանալ բազիլիկ է, կառուցված տեղական բազալտ քարով: Եկեղեցին թեև շատ հին պատմություն չունի, բայց իր պատերի մեջ տեղադրված առանձին քարերի վրայի քանդակագործների ոճական առանձնահատկությունները վկայում են, որ այստեղ հնում նշանավոր շինություն է եղել: Թերևս դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ դարեր շարունակ այս բնակավայրը կոչվում է Վարազքունի:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը գյուղի անունի բացատրությունը կապում է Վարազ-Տրդատ իշխանի հետ. «...վասն որոյ կոչում է Վարազքուն-քուն Վարազ-Տրդատ իշխանի բնակության տեղին»¹⁷: Հստակացության, գյուղը սկզբում եղել է երկրամասի առաջին տեր Առանի ամառանոցը, իսկ հետագայում այն պատկանել է Վարազ-Տրդատ, Վարազ-Գրիգոր իշխաններին:

Ինչպես այս, այնպես էլ հարևան Դաֆրազ գյուղերի շրջակայքում կան մի շարք նվիրական վայրեր, բնակատեղեր, աղբյուրներ, բերդեր, եկեղեցիներ, մատուռներ և այլ կարգի հուշարձաններ:

Այսպես: Ուշադրության արժանի է «Ղոբա» ուխտատեղի գույգ մատուռները, Նախիջևանիկ գյուղի դամբարանը և Հին Քյաթունի գյուղատեղին:

Վերջինիս հետքերը տեսանելի են Նոր Քյաթունի գյուղից մի քանի հարյուր մետր դեպի վերև ընկած տեղամասում: «400—500 ծուխ եղած է Հին Քեաթունկա, բայց...

սովի և ժանտախտի անողորմ երեսից գաղթում և տեղափոխվում են զանազան տեղեր»¹⁸:

Այստեղ ընդարձակ տարածություն է: Են գրադեցնում գյուղի տնատեղերը, տապանագրեր պարունակող գերեզմանատունը: Բնակավայրի փլատակների մեջ նկատելի են եկեղեցու պատերը, դռան քարավորի մեծ քարը, որի վրա հագիվ նշմարվում են «Ո...» և «ան» տառերը: Եկեղեցին կոչվել է Սպիտակ հոլ (ույ): Այս եկեղեցուց ոչ այնքան հեռու, մի գեղատեսիլ բլրակի վրա, «Զորավոր» անունով նշանավոր սրբավայրն է:

Դաֆրազ գյուղում անխաթար պահպանվում է «Կարմիր Ավետարան» եկեղեցին:

¹⁸ «Արցախ», էջ 129: Հին Քյաթունը մերձակա տասնյակ հայկական գյուղերի հետ միասին ավերվել, կործանվել և հողին է հավասարվել 18-րդ դարի վերջին, պարսկական թագածառն Աղա Մուհամադ խանի արշավանքի ժամանակ: Նրբ չհաջողվեց գրոհով տիրել Ծուշիի անտիկ բերդին, կատաղած խանը հրամայում է իր 85 հազարանոց զորամասերին, որ երկրի երեսից ջնջեն լեռնային երկրամասի, հատկապես Կարկառի հովտի գյուղերը (որոնց բնակչության մեծ մասը տեղափոխվել էր Ծուշի և կազմում էր նրա պաշտպանության հիմնական ուժը), վանական և արտադրական շինությունները, ագիները, ցանքատարածությունները: Այս աղետին գումարվեց նաև մեկ ուրիշ, ոչ պակաս ահավոր աղետ. սովը, սուր վարակիչ հիվանդությունները: Սակայն, դեռ դա բավական չէր: 1826 թվականին Արաւ-Միրզան իր 85 հազար ընտիր բանակներով նորից է հարձակվում Ղարաբաղի վրա: Ծուրջ 48 օր պաշարում է Ծուշին, ավերում ու մոխրի կույտերի վերածում գավառի (նախօրը ավերումից հազիվ ոտքի կանգնած) անպաշտպան հայկական գյուղերը, անխնա կոտորում բնակչությանը:

Երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, հայ բնակչությունը հնարավորություն ունեցավ վերադառնալու հայրենիք: Օտարության մեջ տառապող դարաբաղցիները հայրենի լեռների կարողություններում նույնպես վերադարձան իրենց հայրենական օջախները: Հայրենադարձներն իրենց հին բնակավայրերի անուններով հիմնում են նոր գյուղեր, կառուցում եկեղեցիներ, տնկում այգիներ, բարեկարգում ճանապարհները, դաշտերը: Այդ է պատճառը, որ ներկայիս գյուղերի մեջ հանդիպում ենք «Նորջեն», «Նորաշեն», «Նորագյուղ», «Նորավան», «Նոր Առաքյուլ», «Նոր Դրախտիկ», «Նոր Մոխարաթաղ», «Նոր Քյաթուն», «Հին Թաղլար», «Մեծ Թաղլար» և այլ անուններով:

Ահա թե ինչու բռնագաղթից պապեմական բնակավայրերը հայրենադարձա՝ դարաբաղցիներին «եկվորներ» համարելու ամեն մի փորձ ձախողման է: դատապարտված:

¹⁶ «Արցախ», էջ 109:

¹⁷ Նշվ. աշխ., էջ 127:

Ծինությունն ունի թաղածածկ դահլիճի հորինվածք: Արտաքին պատերի հարթությունն աշխուժացված են լուսամուտների և դռան եզրերի դեկորատիվ զարդաքանդակներով:

«Կարմիր Ավետարան» եկեղեցու արևելյան մասում, մոտավորապես 75 մետր հեռավորության վրա, «Կոթաց օջախ» եկեղեցին է, իսկ քիչ դեմը՝ հյուսիսային մասում կառուցված է «Ղարիբ օջախ» անունով մեկ ուրիշ հուշարձան:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ այս եկեղեցիները բազիլիկ տիպի են, որոնք 17—19-րդ դարերում ենթարկվել են վերակառուցումների:

Դահրազ գյուղի հյուսիսային մասով, արևելքից-արևմուտք, ձգվում է մի լեռնաշղթա, որին կապած է Քերծ (Ժայռ) մատուռը: Այս մատուռը հայտնի է նաև «Հոռոմսիմա» (Հոփսիմե) անունով և տեղացիների կողմից ընկալվում է իբրև սրբավայր: Կիսաժայռափոր մատուռը կանգուն է: «Հոռոմսիմա» ժայռի գագաթի փոքրիկ հարթակը երկու կողմից շրջափակված է հին, ավերված բերդի պարիսպներով: Պարսպի տակ, ճորի մեջ, կա մի աղբյուր՝ «Պերցի ջուր», այսինքն «Բերդի ջուր» անունով:

Գյուղի տարածքում գտնվող «Կոթ», «Յուրդուջան» գյուղատեղերի գոյության մասին են վկայում այստեղի համանուն քարաշեն աղբյուր-հուշարձանները:

Դահրազ գյուղում, բացի հիշատակված հուշարձաններից, արժեքավոր է նաև Ղորփի ժայռի քարայրը: Ամենայն հավանականությամբ, այս քարայրը արհավիրքների ժամանակ տեղացիների կողմից օգտագործվել է որպես թաքստոց, պաշտոնական ապահով բնակավայր:

Դռնավազ գյուղի ներկայիս և Աստվածածին եկեղեցին կառուցվել է հայոց ՌՄՂ թվականին, տեղական կուպտատաշ չեչ քարով: Ներսում երկու մույթերը աղեղնաձև կամարներով միանում են պատերին կից կիսամույթերին, իրենց վրա պահելով թաղակապ ծածկը:

Մյուս եկեղեցին կոչվում է Ադին ճահատակ: Հավանաբար, սա գյուղի ամենահին եկեղեցին է, բազմիցս ենթարկված վերակառուցումների: Փոքրիկ թաղածածկ դահլիճի հորինվածքով շինության ներսի պատերի մեջ տեղադրված են մի շարք գեղեցիկ խաչքարեր, վիմաքարեր: Եկեղեցու մոտերքում նկատելի են հին, կործանված բնակավայրի և նրա ընդարձակ գերեզմանատան հետքերը:

Եկեղեցու բակում, կառուցված է մի հեռաքրքիր հուշարձան: Այն ունի երեք մետր

լայնություն, երկու մետր հաստություն և հինգ մետր բարձրություն: Դեպի արևմուտք նայող ճակատի որմնախորշում տեղադրված են երեք հիսնալի խաչքարեր, որոնց արժեքն ավելի է բարձրանում, հատկապես կոնկրետ թվագրություն պարունակող արձանագրությամբ: «ԹՎ Ծի (1071 թ.) կամալ ամենակալին Աստուծոյ ես ... Գրիգոր ... Աստուծոյ միաբան եղբարքս լա... զիսաշս իշխանութեան ... և հայրապետութեան...»: Օհանեսի տեր Ներսեսի ո... աղաթեցեք»¹⁹:

Այս խաչքարերը Ղարաբաղի տարածքում եղած հնագույն այն խաչքարերից են, որոնց վրա քանդակված են բուսական ու երկրաչափական պատկերների այն մուշ-ները, որոնք հետագա դարերում դարձան տիպական, առանձնահատուկ, որով և այսօր մասնավորվում է հայկական խաչքարերի առանձնահատուկ արժանիքները:

ՄԱԶԻ ԿԱՄՈՒՐԶ

Արցախ-Ղարաբաղ երկրամասը հայտնի է իր բնական պայմանների բազմազանությամբ ու կտրուկ հակադրություններով: Լեռնային մակերևույթը խիստ կտրտված է սրբնաց գետերով, գետակներով և հեղեղատներով, որոնք զարման և աշման վարարումների ժամանակ դառնում են գրեթե անանցանելի: Դա լուրջ խոչընդոտներ էր հարուցում գետերի երկու ափերի միջև բնական հաղորդակցության կապեր հաստատելու համար:

Թերևս այդ է պատճառ հանդիսացել, որ Արցախում, Հայաստանի մյուս մարզերի մեծ, հնուց ի վեր պատշաճ ուշադրություն է դարձվել ինժեներական կառուցվածքների, առանձնապես կամուրջներ շինելու վրա:

Միջնադարյան պատմիչների վկայությամբ Ղարաբաղի հնագույն նշանավոր կամուրջներից հայտնի են Ուլուպապա (Խաչենագետ) Պարտալի, Պառալի, Վարդնաթաղի (Թարթառ), Իշխանեքի (Բշխանագետ), Շոշվա (Կարկառ) բազմաթիվ և միաթիվ կամուրջները, որոնք կառուցված են եղել վաղ միջնադարում:

Կամուրջաշինարարությունը Ղարաբաղում (կանգ առնելով արաբական, թաթար-մոնղոլական և օսմանա-պարսկական երկարատև արշավանքների, պատերազմների ժամանակ) մոր թափ է ստանում 10—13-րդ, հատկապես 17—18-րդ դարերում:

Սակայն դարեր տևող այդ պատերազմներն առաջին հերթին ոչնչացրել են ռազմական նշանակություն ունեցող շինությունները՝ այդ թվում նաև կամուրջները:

¹⁹ «Արցախ», էջ 181:

Այդ իսկ պատճառով, պատահական չէ, որ Թարթառի վրա կառուցված 6 (քարաշեն) կամուրջներից մեզ է հասել միայն երեքը: Մյուս գետերի վրա եղած կամուրջներից ամբողջական տեսքով մնացել են երկուսը, Մազի անունով կամուրջը, Ստեփանակերտի հարավային մասում, և Մեծ Թաղարի կամուրջը՝ Հաղորդի շրջանում:

2նայած Մազի կամուրջն ունի պարզ ձև, բայց տեղանքի ճիշտ ընտրության, շինա-

մըրջի ճակատների հարթությունները: Թաղի կամարը կողքի ճակատներից ներս է դրված 10 սանտիմետր: Կամարի կենտրոնը տեղադրված է հիմքերի հետ մույն հարթության վրա, որի հետևանքով կամուրջն ունի կիսաշրջանաձև ուրվագիծ:

Թաղի հաստությունը շատ բարակ է, որպիսի հանգամանքն էլ նկատի ունենալով ժողովուրդը նրան տվել է մազի (այսինքն մազի հաստություն ունեցող) կամուրջ:



Մազի կամուրջը

նյութի ուսցիւնալ օգտագործման, ճարտարապետական ձևերի լակոնիզմի մեջ եղած յուրօրինակ արտահայտությամբ մույնպես արժանի տեղ ունի Հայաստանի կամրջաշինության պատմության մեջ:

18-րդ դ. առաջին քառորդում, Ավան հարյուրապետի (Յուզբաշի) հորդորանքով, կառուցված այս կամուրջն ունի 7 մետր լայնություն, 3,5 մետր բարձրություն, իսկ կամրջի թռիչքի երկարությունը հասնում է 5 մետրի:

Մազի կամուրջը կառուցված է տեղական ջահում բաղի կրաքարից: Ընդ որում ճակատային պատերն իրականացված են կոպտատաշ, իսկ թաղը և թաղի կամարները՝ սրբատաշ քարերով: Այսպիսի զուգակցումը բավականին աշխուժացնում է կա-

Այժմ էլ կամուրջը գործում է: Նրա վրայով անցնում են Ստեփանակերտից դեպի Ծուշի, Գորիս և այլ բնակավայրեր մեկնող մեքենաները, մույնիսկ ծանրաքաշ հսկա «Բելազ»-ներն ու թրթուրավոր բուլդոզերները: Կամրջի խելերի հիմքերի տակի ժայռը լրիվ մերկացված է, իսկ գետը իր հունը, ժայռը ճեղքելով, խորացրել է շուրջ 10 մետր:

Հայկական կամուրջները Պ. Վ. Ծյունի արտահայտությամբ «...այն կառուցվածքներից են, որոնք համաշխարհային ճարտարապետության ամենաարժեքավոր ստեղծագործությունների շարքին են պատկանում»²⁰:

²⁰ П. В. Щусев, Мосты и их архитектура, М., 1952, стр. 180.

Ստեփանակերտի մուտքի աջ մասում, սիգապանծ լեռների ֆոնի վրա, կանաչ թփերով շրջապատված բարձր բլրի գագաթին, կանգնած է փառահեղ մի կոթող: Չնայած հին պատմությունն չունի այն, բայց կարճ ժամանակամիջոցում նա դարձել է մարզկենտրոնի խորհրդանիշն այնպես, ինչպես Կույսի աշտարակը Բաքվում, Սասունցի Դավթի արձանը՝ Երևանում: «Մենք ենք մեր լեռները» — իր տաղանդավոր ստեղծագործությունն այսպես է կոչել մոնումենտի հեղինակ, դարաբաղի հայտնի քանդակագործ, ՀՍՍՀ վաստակավոր քանդակագործ Սարգիս Բաղդասարյանը:

Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի կարմրագույն տուֆից կերտված քանդակը ներկայացնում է ավանդական տարազով երկու տարեց դարաբաղիների: Մարդ ու կին են նրանք, ուսուսի հպարտ ու անհողողող կեցվածքով ու սևեռուն հայացքով: Նրանց տակ պատվանդան չկա: Ասես լեռնաբլուրը ճեղք է տվել, և նրանք այդ ճեղքից են բարձրացել, կանգնել՝ ոտքերը խրած հայրենի հողի մեջ:

Հղացման խորությամբ և ձևերի մոնումենտալությամբ վեհ տեսք ունի այս կոթողը: Նայիր, և նա քեզ կպատմի դարաբաղյացու հերոսական կենսագրությունը, հարատևման մեծ գաղտնիքը:

ԲԱՆԱՐԱՍԻ ԾՐԶԱԿԱՅՔԻ ՀՈՒԾԱՐԶԱՆՆԵՐԸ

Դարաբաղի լեռնաշղթայից դեպի արևելք բազուկավորվող սարերը պատած են աստառներով ու կանաչ մարգագետիններով: Համատարած այս կանաչի մեջ առանձնահատուկ տպավորիչ ուժ ունեն պատմա-դարտարապետական հուշարձանները, որոնք այնպես շատ են Բաղարա, Խանաժախ, Խանգը, Խնձրստան, Դահրավ, Նորագյուղ, Ուլուքաք, Քարագլուխ և այլ գյուղերի շրջակայքում:

Ահա դրանցից մի քանիսը:

1. Բաղարայի «Խրավոնը» կոչվող հանդամասում դեռ մնում է «Խրավոնը», գուցե և «Խրավոնը» անունով մատուռ-մեհաստանը: Այն թաղված է անտառի մեջ, համարյա կիսափուլ վիճակում:

Մատուռին կից կա մի փոքրիկ շինություն, իսկ շրջակայքում խաչքարերով գերեզմանոց, որը թույլ է տալիս ենթադրելու, թե այստեղ ժամանակի ընթացքում եղել է համեմատաբար ոչ մեծ բնակավայր: Ո՛չ շինության որմնում և ո՛չ էլ խաչքարերի վրա որևէ գրություն չի պահպանվել, սակայն խաչքարերի ոճից կարելի է ենթադրել, որ

նրանք 12—13-րդ դարերից են:

Նմանատիպ մի այլ մատուռ գտնվում է նախկին սոցագործարանի դիմաց, որին տեղացիները անվանում են «Դրբաստո եխծի»: Սրա վրա ևս չեն պահպանված կառուցման վերաբերյալ տեղեկություններ:

Այստեղից ճանապարհն անտառի միջով, գետի աջ ափով, վեր է բարձրանում և գնում, հասնում անտառի խորքում, ծառապատ մի բլրի վրա, կառուցված «Օխտը եխծի» կոչվող հուշարձանախմբին: Այստեղ իսկապես կառուցված են յոթ եկեղեցիներ, որոնցից չորսը մի ամբողջական շինություն են կազմում՝ իրենց դռներով ու պատուհաններով, իսկ երեքը կառուցված են նրանց շրջապատում: Ծենքերը գտնվում են կիսավեր վիճակում, փլված են տանիքները և պատերը: Եկեղեցիների շրջապատում կան բազմաթիվ խաչքարեր՝ ջարդված ու մաշված արձանագրություններով: Նրանց վրա պահպանված մի քանի արձանագրություններում ընթերցվում է ՍՄԲՍ ԻԾԽՍՍ աւանդ: Քառյակ եկեղեցիներից միայն մեկն է, որ պահպանել է իր ամբողջականությունը: Նրա ձախակողմյան որմի մեջ պահպանվել է մի խաչքար, որի քերծված արձանագրության մեջ ընթերցվում է. «ԹԻԼ ՈՒ: ԵՍ ՍՈՅԵՍ ՍՄՊԱՍ...ՈՐԴԻ...»: Մյուս տառերը չեն ընթերցվում: Իսկ խաչքարի կենտրոնում կա այսպիսի մի տեքստ. «ՍՄՊ... ԻՆԻՍՆ, ԱՏ...ՈՐՀԻ...»: Եկեղեցու նույն որմի շարունակության վրա մյուս խաչքարերը հանված և թափված են շրջակայքում, որոնց վրա նույնպես կան քայքայված արձանագրություններ, կրոնական ու աշխարհիկ բովանդակության տարբեր պատկերներով: Եկեղեցին ունի մեկ պատուհան և մեկ մուտք: Պատուհանի բարձրությունը հասնում է 80 սմ-ի, լայնությունը՝ 43 սմ: Որմնում պահպանված խաչքարը կերտված է սպիտակ տուֆից, նրա բարձրությունը՝ 1,1 մետր է, իսկ միջին լայնությունը՝ 85 սմ: Պարզվում է, որ խաչքարը վերաբերվում է 1158 թվականին, իսկ Սոյեմը եղել է Սմբատ իշխանի որդին: Արձանագրությունների մեջ ընթերցվում է «արևելից» բառը: Կարելի է ենթադրել, որ այստեղ 11—12-րդ դարերից իշխել են Արեւելից Սմբատ իշխանի ժառանգները: Կարծում ենք, որ այս հուշարձանը դեռևս ուսումնասիրության խիստ կարիք ունի:

«Օխտը եխծուց» արահետը անտառի միջով տանում է դեպի «բերդը», որին տեղացիները անվանում են Պորթ: Այստեղ, անտառի մեջ, վեր է խոյանում մի հսկա ժայռ, որի վրա պահպանվում են հին պարսաի մնացորդները: Նրա շրջապատում հյուսիսային կողմում, այժմ էլ պահպանվում են

հին շենքերի մնացորդներն ու գերեզմանաքարերը: Տեղացիները պատմում են, որ այստեղ սպորող բնակիչները ստորգետնյա անցքով հասել են գետափ և այնտեղից խմելու ջուր տարել բնակիչների համար:

Բաղարա գյուղի հյուսիսային մասում է գտնվում «Փրկիչ» կամ «Փրկչա» եկեղեցին: Ծեփն այժմ էլ կանգուն է, ունի երկու դուռ, երեք պատուհան և ոչ մեծ բեմ: Կառուցված է անտաշ քարից: Եկեղեցու դռանը, պատի մոտ շարված են մի քանի խաչքարեր, իսկ շրջապատում՝ բազմաթիվ գերեզմանաքարեր, առանց գրությունների: Եղած արձանագրությունը այնքան անմխիթար վիճակում է, որ հնարավոր չէ ընթերցել եկեղեցու կառուցման թվականը: Նրա առաջին տողը քերծված է և երևում է, որ եկեղեցու կառուցման թվականը գրված է հենց առաջին տողում: Այժմ եկեղեցին կանգուն է: Կատարվել է մեծ մասնակի վերանորոգում, դրված է երկու երկաթե դուռ և վերակառուցված են հատակն ու բեմահարթակը: Նշվածներից բացի գյուղի հյուսիսային մասում գտնվում են ևս երկու հուշարձաններ՝ «Ծերա մահատակը» ու «Օծկան վանքը»:

2. Հետաքրքիր հուշարձան է Բաղարայի ձախ թևում գտնվող Խանածախ գյուղի եկեղեցին: Արձանագրությունների մեջ ընդված է ս. Աստվածածին անունով: Եկեղեցին եռանավ բազիլիկ է, որի ներսի չորս սյուները աղեկաձև միանում են պատերին կից կիսամույթերին: Աղոթարանը երկու զույգ խաչաձև մույթերով բաժանվում է երեք մասի, որոնք ծալածածկ են: Բեմի երկու կողմերում կան ուղղանկյուն հատակագծով թաղակապ ավանդատներ:

Խանածախից դեպի հյուսիս, երեք կողմից առանձնացված տափարակը, ժողովրդական անվանակոչումով Շիրատեղ (քաղաքատեղ) է համարվում: Տեղանքը հերկելու ժամանակ այդտեղ հաճախակի գետնի երես է դուրս գալիս տարբեր մեծությամբ, զույնի և տեսակի կավանդներ, քարե աղորիքներ, արծաթե ու պղնձե դրամներ: Քաղաքատեղի շուրջը տարածված է ընդարձակ գերեզմանատունը: Հիշյալ վայրից վերև, բլրակի գլխին, կանգնած մնում է միջին մեծությամբ մի խաչքար: Նրա զարդանախշերի ոճական առանձնահատկություններից ելնելով կարելի է ասել, որ այս խաչքարը 10-րդ դարի գործ է:

Ուրիշ բնակավայրերի, սրբավայրերի, վանական շինությունների հետքեր են արձանագրվել «Բանվոր Նան», «Ջալալ Հասան» տեղանուններում: Իսկ խաչքարեր պարունակող հին գերեզմանատունը զբաղեցնում է Տրագետի աջափնյա բլրակի լանջը:

3. Խանձք գյուղի ս. Ստեփանոս եկեղեցին, իր պատերի մեջ տեղադրված խաչքարի վրայի արձանագրության հաղորդած տվյալներով, կառուցվել է 1230 թվականին: «Թիւն ՈՀԹ ես Հայրապետ, Պետրոս, Վարդան, Յոհան կանգնեցաք զխաչս մարմն մեր. որ քանապշտ, աղքատսներ էր յաղաթս յիշեցէք»²¹: Սակայն, այստեղի մի այլ արձանագրություն, որ գտնվում է եկեղեցու մուտքի ճակատակալ քարի վրա, թվագրված է ՌԺԻԲ (1773 թ.) վկայում է, որ եկեղեցին կառուցվել է Խանձքի գյուղացիների ջանքերով, Աղվանից Պետրոս կաթողիկոսի ձեռնադրությամբ: Նշված երկու արձանագրությունների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ միջնադարում այստեղ կառուցված է եղել եկեղեցի, որը հավանաբար կործանվել է 15—16-րդ դարերում, իսկ ինչ վերաբերվում է ներկայիս եկեղեցուն, որի պատի մեջ դրված է անցյալի հիշողություն հանդիսացող խաչքարը, փաստորեն հնի հիմքերի վրա վերակառուցված եռանավ բազիլիկ է: Խանձք գյուղի հարավային կողմում, հին ճանապարհի եզրին, ծառերի տակ, ընկած են երկու խաչարձաններ: Աջակողմյան խաչքարի վրա պահպանվել է արձանագրության միայն առանձին մասեր և տառեր: Բարեբախտաբար այս արձանագրությունը ժամանակին ընդօրինակել է Մ. Բարխուդարյանը:

«Յանուն Սուրբ Երրորդութեան ես Ստուանէս ու Բարսեղ կանգնեցաք զխաչս հար մերոյ Հայրապետայ և մարմն մերոյ Հոռամսիմին, որք երկրպագէք, յաղաթս 2Բ (1253)»²²: Ս. Հովհաննեսի մատուռը գտնվում է ջրխտակ (զույգ) խաչարձաններից բավական ցած, առվակի ձախ ափին: Թեև մատուռի կառուցման վերաբերյալ որևէ տեղեկություն չի պահպանվել, բայց նրա ոճական, ճարտարապետական առանձնահատկություններից կարելի է ենթադրել, որ այն 17—18-րդ դարերում շինված հուշարձան է: Մատուռի շուրջը տարածված գերեզմանատունը կույ է գնացել դարաքաղյան փարթամ բուսականությամբ: Գրեթե նույն դրության մեջ գտնվող մեկ ուրիշ գերեզմանատուն փոված է «Վարդապետի խութ»-ի վրա: Բացի դրանից մի այլ հանգստատուն երկու անհուն գյուղատեղեր և Անապատ կոչվող գեղեցիկ մատուռը գտնվում են «Ծոշուան խութի» (բլրակի) ստորոտում: Ամենայն հավանականությամբ այս բնակավայրերը, հուշարձանները շեն ու շուք են եղել միջնադարում Խաչենի իշ-

²¹ «Արցախ», էջ 159:

²² Նույն տեղում:

խանությունների վերելքի ժամանակաշրջանում:

4. Խնձրատանը խաչենի այն գյուղերից մեկն է, որտեղ գործել է տնտեսական նշանակություն ունեցող սրանոցը (ձիթահանը): Եկեղեցու արևմտյան կողմում է եղել ձիթահանի ուղղանկյուն հատակագծով շենքը: Այն կառուցել է Մելիք Ալահվերդին, 1772 թվականին: Արտադրական փոքրիկ «ձեռնարկությունը» մի քանի սենյակից է բաղկացած եղել: Գյուղի ծերերը պատմում են, որ ձիթահանի կենտրոնական, ամենամեծ սենյակում տեղադրված է եղել քարե աղացը: Այստեղ ծեծվել է կտավհատը, աղացը պտտեցվել է փայտե առանցքի միջոցով, եզան կամ ջորիի ուժով: Հետագայում ձիթահանի քարերով կառուցվել է երկու մետաքսագործական ֆաբրիկաներ, որոնցից մեկը մինչև օրս գործում է:

Գյուղի եկեղեցին ուշ միջնադարի կառույց է: Նրա գավթում թաղված են Խնձրորեստանի մելիքները: Այստեղ, հիշարժան հնավայր է համարվում նաև «Հանգած եղջի» (եկեղեցի) ավերակները: Բլրակի ստորոտում նկատելի են հին ոճի տապանաքարեր, խաչքարեր և այլ կոթողներ:

Վերը նշվածից բացի խոշոր բնակավայրի և գերեզմանատան հետքեր են արձանագրվել տեղացիների կողմից «Պալեն շեն» (պապուն շեն) կոչվող տեղամասում:

Խնձրատանցիները, թվարկելով իրենց հուշարձանները, երբեք չեն մոռանում գյուղից վերև՝ բլրակի վրա ցցված մարդանման մեծ քարը, որն իր գլխին պահում է կաթսայանն մի այլ քար: Գեղեցիկ ու հուզիչ ավանդություն է կապված այս քարի հետ: Ավանդության իմաստը դարաբաղի հայ կնոջ անձնագրի նվիրվածությունն է, վեհությունը և մեկ էլ անահման հավատարմությունը:

5. Նորագյուղի «Հունի-խաչ» (հոնի) հուշարձանը գտնվում է համանուն լեռան արևելահայաց լանջի վրա (դեպի Ասկերանի կողմը): Նվիրական վայրը համարվել է սրբավայր:

Հին Նորագյուղի (նոր Նորագյուղը վերջին տարիներին լեռներից իջել և կանոնավոր շարքերով տարածվել է հարթավայրում, Ստեփանակերտի օդանավակայանի հյուսիս-արևելյան մասում) եկեղեցին գրտնդվում է գյուղի արևմտյան մասում: Այստեղ ձորակի կտրծքից դուրս է գալիս մի աղբյուր՝ «Վերին ջուր» անունով: Գյուղից դեպի հյուսիս, լեռան սեռի վրա, «Սուրեն խաչ» սրբավայրն է: Իսկ գյուղից 4—5 կիլոմետր հեռավորության վրա, «Չնգըլ» կոչվող տեղամասում, կա քարայրի տեսքով մի

կացարան, որին տեղացիներն անվանում են «Քարե տուն»:

6. Դահրավի գյուղամերձ շրջանում պահպանվում են երեք եկեղեցիներ:

Թաղածածկ դահլիճի հորինվածք ունեցող այդ հուշարձանները իրենց շինարարական արձանագրությունների տվյալներով կառուցվել են ուշ միջնադարում: Գյուղից 5—6 կիլոմետր հեռավորության վրա, բնության մի գեղատեսիլ անկյունում, անխաթար վիճակում մնում է «Սոեն անհատակ»-ի վիմարակապ, զարդանախշերով հարդարված սեղանատուն հիշեցնող մի քարաշեն բնակարան:

Ծենքի շրջապատում, անտառի մեջ հազիվ հազ տեսանելի են գերեզմանատան տապանաքարերը: Գրեթե նույն դրության մեջ են գտնվում նաև «Եղծահող» տեղամասի բազմաթիվ շինությունների փլատակները: Դատելով վանական շինությունների քանակից (դրանց հետքերը համեմատաբար նկատելի են) պետք է եզրակացնել, որ այստեղ ժամանակին եղել է վանքային ընդարձակ համալիր: Իսկ թե երբ է այն կառուցվել, կործանվել՝ դժվար է առանց պեղումների, մանրակրկիտ ուսումնասիրությունների որևէ կոնկրետ բան ասել:

Տեղացիների կողմից սիրված հուշարձան է համարվում «Բաֆֆու» աղբյուր-հուշարձանը: Ասում են, որ հայ մեծ վիպասանը եղել է այս գյուղում: Դահրավի տարբեր կետերում են գտնվում «Փռնուն անհատակ» սրբավայրը, «Մեծ», «Քարագլուխ», «Ընդաքար» քարանձավները, 6—7 մետր բարձրություն ունեցող մի հետաքրքիր, մարդանման ժայռազանգված և այլ հուշարձաններ:


ԱՍԿԵՐԱՆԻ ԲԵՐԴ

Ստեփանակերտից դեպի արևելք՝ մոտավորապես 14 կմ հեռավորության վրա է գտնվում Ասկերանի նշանավոր բերդը: Այն ձգվում է Ասկերան ավանի արևմտյան մասով: Բարձր աշտարակներով, հաստ պատերով բերդը երկու կողմից փակում է Կարկառ գետի հովիտը: Այն ամրացված է կրկնապարիսպներով, որով և անմատչելի է դարձնում լեռների արանքում գտնվող ձորակը: Աշտարակները շրջանաձև հատակագիծ ունեցող պաշտպանական կառուցվածքներ են, որոնք շարված են մանր գետաքարերից ու կրաքարերից՝ կրաշաղախով: Դիտաշտարակները իրար հետ են հաղորդակցվում պատերի առամասն վերամասերի խրամատանման անցքերով: Պատերի մեջ, ներսից, կան բազմաթիվ խոր-

շեր և տարբեր լայնության անցքեր՝ հրակակետեր: Որոշ խորշերից պատերի միջով օդանցքների մասն խողովակաձև հատուկ անցքեր են ձգվում դեպի վեր:

Ասկերանը որպես զորանոց գոյություն ունի 18-րդ դարի կեսերից: Իսկ 1788—89 թթ. պարսկական հարձակումներից պաշտպանվելու համար այն ավելի ամրացվելով վեր են ածվել ամրոցի («Ասկերան» թուրքերեն նշանակում է զորանոց):

ուրվագիծը: Քարքարոտ ու դժվարանց մի կաճանը ձգվում է դեպի վանք: Ծարտարապետական այդ կոթողը միջնադարի շինությունն է: Իր հորինվածքով և կառուցման ձևերով այն կարելի է դասել կենտրոնագմբեթ խաչաձև հատակագիծ ունեցող եկեղեցիների շարքին: Վանքի եկեղեցին չափերով, հորինվածքով շատ նման է Գրուչավանքին, այն տարբերությամբ, որ Գրու-



Ասկերան կոչվող պարիսպներից մի հատված

Պոկի սուրբ Գևորգի կամ Պոկես բերքի վանք. Այն գտնվում է Ստեփանակերտի շրջանի Ուլուքաք գյուղի տարածքում, գեղատեսիլ մի լեռան գագաթին: Ի դեպ, Ուլուքաք գյուղը դարեր շարունակ եղել է խաչենագետի ափին, պատմական Ուլուքաք կամրջի մոտ: 18-րդ դարում գյուղում համաճարակ հիվանդություն է բռնկվում: Գյուղացիներից շատերը մահանում են, մի մասը ցրվում, հարևան գյուղերն են գնում, իսկ մի փոքր մասը տեղափոխվում է ալ գարձունքի ստորոտը, Պոկեսքերք վանքի հալացքի տակ հիմնադրում ներկայիս գյուղը:

Ուլուքաքից երևում է Գևորգասարի կատարին նստած վանքի գորշագույն գմբեթի

չավանքի գմբեթն ավելի բարձր ու սրածայր թմբուկ ունի:

Վանքը մոտավորապես 400 տարվա պատմություն ունի. արտաքին ձևերում գուսպ է, զարդաքանդակներն արված են միայն լուսամուտների և դռների կամարների վրա: Վանքի հիմնադիր Հովսեփ վարդապետի արձանագրությունը փորագրված է ոչ թե քարի, այլ աջակողմյան խորանի կամարակապ առաստաղի ծեփի վրա: Այդ խորանում են թաղված մի շարք նշանավոր խաչենցիներ:

Վանքին կից կան երկու կիսավեր սենյակներ: Վանքի հիմնադրման, գուցե և վերակառուցման տարին ըստ արձանա-

գրության 1490 թվականն է: «Ի դուռն խաչենու Պտկի սուրբ Գևորգ զօրատրին»: Վաճառք վերջին անգամ նորոգվել է 1896 թվականին, Հովհաննես անունով մի վարդապետի կողմից:

ՔԱՐԱԳԼՈՒՄ-ԾԻԿԱՔԱՐ ԲԵՐԴԸ

Խաչենի հնագույն նշանավոր բերդերից մեկն է «Քարագլուխը» կամ, ինչպես գրականության մեջ է վկայված՝ Ծիկաքարը: Պատմական աղբյուրներն ստույգ տեղեկություններ չեն հաղորդում բերդի սկզբնական շինարարության թվականի մասին, իսկ ավանդության համաձայն այն պետք է հիմնադրված լինի մ. թ. երկրորդ դարում:

Հայոց երկու հարյուր յոթանասուն թվականին կառուրված մի դեպքի առնչությամբ բերդի անունը հիշատակում է Մովսես Կաղանկատվացին, իր «Պատմություն Աղվանից աշխարհի» հայտնի աղբյուրագիտական երկի մեջ: Պատմիչը գրում է, որ «Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի ենթարկեցին Ամարաս գավառը, և մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Ծիկաքար»²³: Այնուհետև հեղինակը շարունակում է. «Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահղի Սմբատյան եռանգահիկ իշխանը և իր քաջագոր եղբայրները իրենց զորքերով լուսադեմին վրա տվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, ցիրուցան դարձրին և, ինչպես աշյուծի ժանիքներից, գերիներին լայեցին»²⁴:

Սակար եպիս. Բարխուդարյանը տեղում հավաքած վիմագրությունների հիման վրա որոշակի նշում է բերդի հիմնադրման, պատկանելության և տեղադրման հետ կապված մի շարք մանրամասնություններ: Պատմիչը, մեջբերելով Քարագլխի հին հանգստարանի մի արձանագրություն, գրում է. «Ծիկաքար բերդը շատ հին է ... Հասան Մեծն բերդս տուած էր Սմբատ անուն ոմն իշխանագի, իբր հայրենիք և գերեզմանատուն»²⁵: Այժմ էլ գոյություն ունեն այստեղի և՛ գյուղատեղին, և՛ ընդարձակ երկու գերեզմանատները, և՛ երկու եկեղեցիները:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում Ծիկաքարը պաշտպանական տեսակետից: Նախ նշենք, որ բերդը տեղադրված է Խաչենագետի աջ մասում և Խոխանաբերդի, Կա-

չաղակաբերդի, Նատարին բերդի, Տիգրանաբերդի հետ միասին մի օղակ է կազմում՝ Գանձասարը՝ Արցախի սիրտը, պաշտպանելու համար: Հետո էլ այն զբաղեցնում է խիստ զանազան լանջեր ունեցող սարահարթը: Այս բարձունքից իշխելով շրջակայտի վրա, բերդը հսկողության տակ է պահել դեպի Խաչենի իշխանությունների կենտրոն ձգվող կիրճը և նրանով անցնող այն կարևոր ճանապարհը, որ երկրամասի լեռնային մասը կապում է դաշտավայրի հետ: Բերդից լավ դիտվում է նաև դաշտավայրից դեպի Կարկառ գետի հովիտը բարձրացող լեզվակը:

Ուսումնասիրությունից երևում է, որ ժայռոտ սարահարթը շրջակայված է եղել ամուր պարիսպներով: Բացի մարդաշեն ամրություններից, բերդը բոլոր կողմերից օղակված է բնական ժայռերով: Այստեղ, անխորտակելի ժայռերի ետևում, թաքնված մեկ խաչենցի ռազմիկ մարտնչել է քսան հոգու դեմ: Կիրճերում, վիմահերձ բերդերի քարանձավում դիրքավորված երկու-երեք քաջարի զինվորներ դիմադրել են թշնամու մի քանի հարյուր զինվորների ճնշմանը:

Սակայն, բացի նշվածից, բերդն ունի նաև ուրիշ կարևոր առանձնահատկություն, որով ավելի է մեծացել նրա դիմադրողականությունը: Խոսքը ամրոցի տակ գտնվող չորս խոշոր քարանձավների, նրանցում գտնվող փոքրիկ ջրամբարների, ստորգետնյա բազմաթիվ սրահների և անցուղիների մասին է:

Երբ թշնամուն չէր հաջողվում գրավել ամրոցը, ապա նա դիմում էր տակտիկական այլ հնարքի երկարատև պաշարման միջոցով ձգտում էր սովի, ծարավի դատապարտել բերդում գտնվող բնակիչներին: Այս դեպքում պաշարվածները լրացուցիչ ապաստարան և օժանդակություն էին զրտնում քարանձավներում: Իսկ անհրաժեշտության դեպքում այս լեռների խիզախ զավակները բերդավանի ստորգետնյա գարտուղիներով դուրս էին գալիս թշնամու թիկունք և այնտեղից (խուճապ առաջացնելով) շեշտակի հարված հասցնում նրան:

Այստեղից դեպի արևելք դարձյալ Խաչենագետի աջ ափում, վաճառարի հարավային կողմում, ուղղահայաց ժայռերի գագաթին նշարվում են Տիգրանաբերդի ավերակների հետքերը, որի արևելյան ստորոտում գտնվող հուշարձանների մասին կխոսվի ստորև:

ՎԱՆՔԱՍԱՐԻ ՀՈՒԾԱՐՁԱՆԵՐԸ

Ստեփանակերտից Մարտակերտ գնացող ճանապարհի ձախ կողմում կրաքարերից կազմված մի սալատալոր լեռնաբազուկ

²³ Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1989, էջ 255:

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Արցախ», էջ 424:

իջնում է հյուսիսից հարավ: Տարին բոլոր նրա լանջերը պատած են լինում չոր անապատային, աղքատիկ բուսականությամբ: Պատճառն այն է, որ այս վայրերում մթնոլորտային տեղումներ քիչ են լինում, և եղած անձրևաջրերն էլ անմիջապես ծծվում են կրաքարային ապառների մեջ: Լեռնաշղթան անհիշելի ժամանակներից կոչվում է Վանքասար, իսկ աղբեջաններն՝ Բեշիկ դաղ: Այն մի տեսակ բնական պատճենի դեր է խաղում. տափաստանային և լեռնային Ղարաբաղի միջև: Վանքասարից հարավ-արևելք տարածվում է Քուր-Արաքսյան ցածրավանդակը, իսկ դեպի արևմուտք՝ Հայկական բարձրավանդակի լեռնաստանը:

Վանքասարի հարավային ստորոտում, այնտեղ, ուր լեռնաշղթան ձուլվում է հարթությանը, կրաքարային ժայռի տակից դուրս է ծայթքում մի վարար աղբյուր՝ Ծաֆուլաղը: Ծիշուն ասած, դա ոչ թե սովորական աղբյուր է, այլ մեր պայմանների համեմատ մի ահագին գետակ: Ամենայն հավանականությամբ Խաչենագետը վերին և միջին հոսանքներում ներծծվում է հրաբխային ծակոտկեն և մանր ճեղքեր ունեցող ապառների մեջ և լեռան տակ թաղված մինչհրաբխային ժամանակաշրջանի գետահովտով դուրս գալիս Ծաֆ-Բուլաղ: Այս կենարար ջուրը առաջին և հիմնական պայմանն է հանդիսացել, որ այստեղ դարեր շարունակ եղել է բնակավայր:

Դրա անատարկելի ապացույցը հուշարձաններն են: Նախ նշենք, որ այստեղի հուշարձաններն, ըստ ժամանակաշրջանի, հիմնականում բաժանված են երեք մասի, կամ երկրաբանական տերմինով ասած՝ բաղկացած են երեք շերտից: Հուշարձանների առաջին շերտը, այսինքն նրանք, որոնք կառուցվել են ուշ շրջանում, գտնվում են տեսանելի (կիսավեր) վիճակում: Մեր ծանոթությունն էլ սկսենք հենց դրանց հետ: Ահա աղբյուրի հարավային կողմում դեռ իր գոյությունը պահպանում է արևելյան ոճի մի ամրակուռ շինություն: Արտաքին շարվածքն ամբողջովին քանդված է, դրա համար էլ առանց չափագրությունների դժվար է որոշել մերկացած շինության ինչ լինելը: Աղբյուրից քիչ դեպի արևելք երկվում են ավերված պարիսպների մասերը, աշտարակների հիմքերը: Գրավոր փաստերը վկայում են, որ 18-րդ դարի երկրորդ քառորդում Փանահ Ալի խանը Քաբիրլիի գավառամասի Բայաթ բերդից իր քոչվոր ցեղակիցների հետ տեղափոխվել է այստեղ, վերականգնել նախկինում գոյություն ունեցող ամրոցը և որոշ ժամանակ բնակություն հաստատել: Վերակառուցված

բերդի մեջ նա շուկա ու մզկիթ է կառուցել: Հետագայում, երբ խանը տեղափոխվել է Ծուշի, աստիճանաբար լքվել է Ծաֆ-Բուլաղի ամրոցը և այն վերածվել ավերակների:

Երկրորդ շերտի հուշարձանները վերաբերում են միջնադարին՝ մոտավորապես Համամ Արևելցու ժամանակաշրջանին:



Խնամախ գյուղի եկեղեցու մուտքը

Մի քանի տարի առաջ պատմաբան Ս. Բարխուդարյանը հաղորդում տպագրեց Աղբեջանի պատմության թանգարանում պահվող հայկական հուշարձաններից մեկի մասին, որը գտնվել է այս կողմերում: Ինչպես հմտորեն պարզում է պատմաբանը, այս հուշարձանն այն տապանաքարն է, որ քաշված է եղել Համամի հարազատի վրա²⁰ և, անատարկելիորեն խոսում է այն մասին, որ հիշյալ բնակավայրը մտնելիս է եղել Համամ իշխանի տիրույթների մեջ:

Բացի այդ, աղբյուրի հյուսիս-արևելյան կողմում, փոքր թեքության վրա, տարածվում է հին հայկական գերեզմանոցը: Հարյուրավոր տապանաքարեր երկար դարերի ընթացքում քայքայվել, իրենց սկզբնական տեսքը կորցրել են: Դրանց մի զգալի մասը թաղվել է հողի մեջ, իսկ ավելի թեքադիր

²⁰ ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1964, № 1, էջ 61—64:

մասում գտնվողները կհստակ չափ են ծածկելով հողով:

Վանքասարի ամենաբարձր ծալոյ վրա բազմած է քառանկյունի հատակագիծ ունեցող մի եկեղեցի: Սովորականից քիչ բարձր կառուցվածքը շինված է գորշագույն կրաքարի տաշած քարերից: Ծածկը, պատերի մի մասը փլված են: Դռան հյուսիսային կողմում, պատի մեջ, տեղադրված խաչքարի վրա մնացած արձանագրությունը հետևյալն է. «Ես Ծահան-շահ որդի Աշոտայ կանգնեցի զխաչս հոգոյ իմոյ»:

Հնագույն հուշարձանները թաղված են հողի տակ և ընդարձակ տարածություն են բռնում: Այս հնավայրը Արցախյան Տիգրանակերտ քաղաքն է²⁷: Պատմությունից հայտնի է, որ Հայոց Տիգրան երկրորդ թագավորը (95—55 թթ. մ. թ. ա.) իր անունով կառուցել է տվել չորս Տիգրանակերտ: Դրանցից ամենախոշորը Աղձնիքում էր կառուցված, որը պետք է դառնար Հայաստանի մայրաքաղաքը, գերազանցելով Արտաշատին, բայց ունեցավ անհաջող վախճան: Նույնանուն մյուս քաղաքները կա-

ռուցվեցին Արցախում, Գողթան գավառում և Ուտիաց աշխարհում: Ուշագրավ է, որ այս չորս Տիգրանակերտներից առաջինը կառուցվել է Արցախում (90-ական թթ. մ. թ. ա.): Անշուշտ պետք է կարծել, որ Տիգրանակերտը Արցախ-Ղարաբաղի ամենահին քաղաքն է եղել: Դժբախտաբար բացի անունից մեր պատմիչները ոչինչ չեն հաղորդել Ղարաբաղի այդ առաջին քաղաքի մասին, որը գոյություն է ունեցել շուրջ 1000 տարի: 10-րդ դարում Արցախի Տիգրանակերտն արդեն ավերակ էր²⁸:

Ղարաբաղի մարզային պատմա-երկրագիտական թանգարանում ցուցադրված Տիգրանի պատկերով արծաթե դրամը, երկաթե նետերն ու սրերը, կավե անոթներն ու կաղապարները գտնվել են այս կողմերից: Բացի դրանից մինչև օրս էլ խաչեցիների լեզվում մնացած «Տրկրակերտը» Տիգրանակերտ անվան աղավաղված ձևն է²⁹, որը տրվում է այն ավերակներին, որոնց մասին խոսք եղավ վերևում:

²⁷ Հ. Խաչատրյան, Ղարաբաղում գտնված հին դրամի մասին, «Սովետական Ղարաբաղ», 1965, մարտի 28, № 78:

²⁹ Ծ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-երկրագիտական թանգարանը, «Վուլտուր-լուսավորական աշխատանք», 1972, № 4, էջ 86:

²⁷ Ծ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի հնաիշխան հուշարձանները, «Աշխատություններ Հայաստանի պատմության պատմական բանգարանի» հատ. VI, Երևան, 1975, էջ 151:

